



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՔԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«22» 01 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 04

Ձեռնարկողը՝

«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ

Մյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 4

Գործունեությունը՝

**Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի
տարածքում պաշտպանիչ բնամասի փլուզման
հետևանքների վերացման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Ռ. Ոսկանյան



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՔԱՂԱՎԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«22» 01 2019թ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 04

Ձեռնարկողը՝

«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ

Մյունիքի մարզ, ք. Կապան, Գործարանային 4

Գործունեությունը՝

**Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի
տարածքում պաշտպանիչ բնամասի փլուզման
հետևանքների վերացման շրջակա միջավայրի վրա
ազդեցության գնահատման հաշվետվություն**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրեն՝



Ռ. Ոսկանյան

Առդիր եզրակացությունը՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 04

« 22 » 01 2019թ.

Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի տարածքում պաշտպանիչ բնամասի փլուզման հետևանքների վերացման գնահատման հաշվետվություն

Պատվիրատու՝	«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ
Ներկայացված նյութեր՝	Աշխատանքային նախագիծ, Գնահատման հաշվետվություն
Գործունեության կատեգորիան	/Ա/ կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ

Համաձայն ներկայացված նախագծի նախատեսվում է՝ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ին 27.11.2012թ. տրված N ԼՎ-183 լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում (Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայր) 2007թ. տեղի ունեցած 11-րդ երակի պաշտպանիչ բնամասի փլուզման հետևանքների վերացման աշխատանքներ:

Փլուզումը տեղի է ունեցել 2007թ. ամռանը՝ Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի լրահետախուզման երկրաբանական աշխատանքներ իրականացնող ուղղաթիռի կայանման հրապարակի հարևանությամբ: Ինժեներատեխնիկական, գեոֆիզիկական, հիդրոերկրաբանական հետազոտական աշխատանքների արդյունքում հիմնավորվել է, որ փլուզումը տեղի է ունեցել հիմնականում ոռոգման և խմելու ջրերը մշակված տարածություն ներթափանցելու և պաշտպանիչ բնամասը ողողալվալու հետևանքով:

Նախատեսվող գործունեության նպատակն է տարածքի նախկին տեսքի վերականգնում, հողաձածկի հետագա դեգրադացիայի կանխում, բնակչության անվտանգության ապահովում և տարածքը ըստ գործառնական նշանակությամբ օգտագործում:

Ծրագիրն իրականացվելու է երկու հիմնական փուլով՝

- առաջացած դատարկության վերացում դատարկ ապարների տեղակայման միջոցով, որն իրականացվել է դեռևս 2007թ, անվտանգության նկատառումներով պայմանավորված,



- մակերևույթի ռեկուլտիվացում հողի բերրի շերտի տեղակայման և կանաչապատման միջոցով:

Դատարկ ապարների տեղակայման միջոցով փլվածքի վերկանգնողական աշխատանքներն իրականացնելու համար մշակվել է տեխնիկական նախագիծ՝ բոլոր անհրաժեշտ տեխնիկական լուծումներով և ինժեներական նկարագրերով: Դատարկ ապարների լցանյութով լցվելու է փլվածքի պատճառով առաջացած դատարկության մնացած մասը, կավային հաստ շերտով լցվելու է (շուրջ 6մ) փլվածքի ջրակլանիչ հատվածը, որպեսզի կանխվի հնարավոր ֆիլտրացիան: Հարթեցված հրապարակում որպես ռեկուլտիվացիայի նախապատրաստական շերտ լցվելու է կավի տոփանված շերտ մինիմալ 0.2մ հաստությամբ:

Ջրամեկուսիչ կավային տոփանված շերտի ամբողջ հարթությամբ լցվելու է հողի բերրի շերտ 25 սմ նվազագույն հաստությամբ: Հողի բերի շերտը բերվելու է «Կապանի ԼՀԿ» ՓԲԸ-ի հողի բերրի շերտի պահեստավորման վայրում կուտակված լրացուցիչ ծավալներից: Հաշվի առնելով հողի շերտի հաստությունը (25սմ) և ռեկուլտիվացիայի ենթակա տարածքի մակերեսը (4.6 հա) կպահանջվի 11500խմ հողաբուսաշերտ: Այնուհետ իրականացվելու է սիզախոտի սերմնացան, որը բազմամյա բուսատեսակ է, հեշտ է հարմարվում կլիմայական պայմաններին: Սիզախոտի ընտրությունը որպես ռեկուլտիվացիոն բուսատեսակ նպատակահարմար է նաև այն տեսանկյունից, որ տարածքն ազատ է անասնապահական նպատակներով օգտագործելու համար, իսկ սիզախոտ բուսատեսակի արմատային համակարգը խորը չէ և գործնականում անհնար է դատարկ ապարներից ծանր մետաղների միգրացիան դեպի բուսատեսակ:

Սիզախոտի ցանման պրոցեսը տեղի է ունենալու երեք փուլով՝ առաջին սերմնացան, դրանից մեկ ամիս հետո երկրորդային ցանքս նոսր հատվածներում և մեկ տարի անց գարնանացան:

Նշյալ երեք փուլային ցանքսից հետո հարթությունն ամբողջովին պատված կլինի սիզախոտով և տնային կենդանիների արոտի դեպքում չի առաջանա սննդային շղթային սպառնացող որևէ բնապահպանական ռիսկ:

Ռեկուլտիվացիոն գործընթացի ավարտից հետո վերականգնված բուսականությունը և վերականգնման առաջընթացն ու մակերևութային ջրահոսքերի առկայությունը վերահսկվելու է առնվազն 1 տարի: Տարածքի մոնիտորինգի և պահպանության արդյունքում ըստ անհրաժեշտության վերականգնված տարածքի մոտ 20%-ում կրկնակի սերմնացան կկատարվի: Ռեկուլտիվացիան իրականացնող ընկերության դաշտային աշխատակիցը 1 տարվա ընթացքում պարբերաբար մոնիթորինգ է անելու, որպեսզի իրավիճակային տեղեկատվություն հավաքագրվի և անհրաժեշտության դեպքում որոշակի տեղերում իրականացվի կրկնակի սերմնացան:

Ռեկուլտիվացիայի ենթակա տարածքում մակերևութային ջրերի վերահսկելու և կառավարելու համար նախատեսված չեն ուղղորդիչ ջրատարներ, քանի որ տարածքը բավականին փոքր և երկրաբանական ռեզիլիենտ է, որ տարածքով ընդգծված մակերևութային ջրահոսքեր չեն անցնում: Կավային ջրամեկուսիչ շերտի միջոցով հնարավոր կլինի կառավարել էրոզիոն ռիսկերը՝ հաշվի առնելով տարածքի մասսշտաբները և ռեզիլենտ:



Համաձայն ռեկուլտիվացիայի իրականացման նախագծի ռեկուլտիվացիայի ծախսերը հաշվարկվել են 60 404 770 դրամ:

Շինարարական աշխատանքները կրում են ժամանակավոր բնույթ և չունեն զգալի ազդեցություն: Նախատեսվող շինարարական աշխատանքների փուլում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցությունների բացառման, նվազեցման նպատակով նախատեսված են մի շարք միջոցառումներ:

Օդային ավազանի վրա ազդեցությունը կապված է հողային աշխատանքների և շինարարական տեխնիկայի աշխատանքի ընթացքում առաջացող արտանետումներով:

Օդային ավազանի աղտոտումը նվազեցնելու նպատակով նախատեսված են հետևյալ միջոցառումները.

- վերականգման ենթակա տարածքից դուրս եկող մեքենաների անվադողերի լվացում,
- հողի, կավային շերտի տեղափոխում անթափանց ծածկոցներ ունեցող մեքենաներով,
- շինհրապարակի օրվա ընթացքում պարբերաբար ջրում,
- բուսածածկ տարածքներում հողերի կուտակումների բացառում,
- սարքավարումների սահմանված աշխատանքային ռեժիմի ապահովում,
- պարբերաբար սարքավորումների պրոֆիլակտիկ ստուգման և թեստավորման իրականացում,
- ջրցանը իրականացնել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- աղմուկի մակարդակի վերահսկման նպատակով վերականգնողական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի կազմակերպում ցերեկային ժամերին,
- տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերաբար ստուգում և կարգաբերում:

Վերականգնման փուլում օդում ածխաջրածնի, փոշու, ազոտի և ծծմբի երկօքսիդի պարունակությունը վերահսկելու համար նախատեսված է իրականացնել մոնիթորինգ (մշտադիտարկում):

Այդ նպատակով նախատեսվում է պայմանագիր կնքել մասնագիտացված բնապահպանական կազմակերպության հետ, որը վերականգնման ենթակա տարածքի հարթակի հարևանությամբ կկատարի նմուշառում և թվարկված արտանետումների պարունակության որոշում:

Յուրաքանչյուր չափում պետք է իրականացվի բոլոր նշված միացությունների երկուական նմուշառումների միջոցով: Նմուշառման կետերը պետք է լինեն վերականգնողական աշխատանքների հարթակից 50-100մ հեռավորության վրա:

Մոնիթորինգի միջոցառումների պարբերականությունը, հաշվի առնելով աշխատանքների կարճաժամկետությունը, կլինի մեկ անգամ՝ նախքան աշխատանքների իրականացումը, (գրոյական վիճակ) և մեկ անգամ աշխատանքների ընթացքում:

Եզրահանգում՝ Ռեկուլտիվացիոն աշխատանքների հիմնական ազդեցությունը պայմանավորված է վերականգնման աշխատանքների փուլով, ինչը չունի զգալի ազդեցություն և կրում է ժամանակավոր բնույթ: Փորձաքննության գործընթացին մասնակցել են



բնապահպանության նախարարության ստորաբաժանումները: Կապան համայնքում տեղի ունեցած չորս հանրային քննարկումների ընթացքում հանրությունը դրական արտահայտվեց նախատեսվող գործունեության վերաբերյալ: Ընդհանրացնելով և վերլուծելով ներկայացված նախագծային փաստաթղթերը, փորձաքննական գործընթացում առաջարկությունների և դիտողությունների հիման վրա կատարված լրամշակումները, կարելի է փաստել, որ ռեկուլտիվացիոն աշխատանքների ընթացքում հնարավոր բոլոր ազդեցությունները թույլատրելի նորմայի սահմաններում են:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Կապանի ԼՀԿ» ՓԲԸ կողմից ներկայացված Շահումյանի ոսկի-բազմամետաղային հանքավայրի տարածքում պաշտպանիչ բնամասի փլուզման հետևանքների վերացման գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն:

Տնօրենի տեղակալ՝

Մասնագետ՝



Ա. Դոնոյան

Ա. Մինասյան